ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 5

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՓՈՐՁԱԳԵՏ՝ ՍԵՎԱԴԱ ՍԱՐԳՍՅԱՆ

2021 Թ.

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

5-րդ դասարան, 1-ին և 2-րդ կիսամյակներ

Միջին դպրոցում կերպարվեստի դասավանդման հիմնական նպատակներն են.

Օգնել սովորողներին՝

- Ճանաչել ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր, արվեստի միջոցով ստեղծագործաբար արտահայտել սեփական գաղափարները:
- Ճանաչել տարբեր ժամանակաշրջանների, ազգերի և մշակութային-գաղափարային խմբերի արժեքները, բացատրել դրանց ազդեցությունն ու արտացոլումը տեղական և համաշխարհային մշակույթի մեջ:
- Ճանաչել և արժևորել ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ:
- Մեկնաբանել և վերլուծել սեփական զգացմունքները, ցանկությունները, կարիքները, նպատակները, սեփական յուրահատկություններն ու հակումները:
- Իրականացնել չափումներ, կատարել մոտավոր ու ճշգրիտ հաշվարկներ և գնահատել արդյունքները՝ ընտրելով և օգտագործելով համապատասխան հասկացություններ, սկզբունքներ, նյութեր և սարքավորումներ:
- Կերպարվեստ ուսումնասիրելիս կիրառել երկրաչափական պատկերների և մարմինների մասին գիտելիքները:
- Նկարագրել տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրի, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումների փոխկապակցվածությունը:
- Վերլուծել, գնահատել և առաջարկել դասակարգման չափանիշներ՝ ելնելով խնդրի պահանջից:
- Կիրառել բնագիտական առարկաներից ստացված հիմնարար գիտելիքները բնության և տիեզերքի օբյեկտների նկարագրության, երևույթների և դրանց փոխադարձ կապերի բացատրության, ֆիզիկական մոդելավորման և խնդիրների լուծման համար:
- Ներկայացնել գիտության և տեխնոլոգիական նվաճումների կիրառության հավանական ազդեցությունը բնության, մարդու և հասարակության վրա:
- Դրսևորել պատասխանատու վարքագիծ բնական ռեսուրսները ռացիոնալ օգտագործելու և շրջակա միջավայրը պահպանելու գործում:
- Կիրառել տեքստային և գրաֆիկական խմբագրիչներ, կարողանալ մշակել տվյալներ օգտագործելով անհրաժեշտ թվային գործիքներ և ծրագրեր:
- Ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակել և իրականացնել նախագծեր:
- Գտնել և օգտագործել տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշել և բնութագրել աղբյուրի արժանահավատությունը և դրանք օգտագործելիս կատարել հղումներ:

- Արտահայտել, հիմնավորել և պաշտպանիել սեփական տեսակետը և դիրքորոշումը:

Ձևավորել՝

- Հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն:
- Տարբեր ձևաչափերով արդյունավետ համագործակցելու և հաղորդակցվելու լսելու,և այլ մարդկանց տեսակետներին և գաղափարներին հարգանքով վերաբերվել ու կարողություններ:
- Մշակութային ընկալման և արժևորման, արվեստի որոշ տեսակներում ստեղծագործական աշխատանքներ կատարելու ունակություններ և հմտություններ դրսևորելու կարողություններ:

Վերջնարդյունքներ.

- Օգտագործել տարբեր նյութեր, մոտեցումներ՝ ստեղծագործական աշխատանքներ ստանալու համար /2D, 3D/:
- Պատրաստել արվեստի եզրույթների բառարան:
- Կատարել աշխատանքներ՝ օգտագործելով կերպարվեստի տարրերը՝ հորիզոնի գիծ, լույս ու ստվեր, համաչափություն, հավասարակշռություն, հակադրություն, շարժում, ազդեցություն
- Ստեղծել երկչափ և եռաչափ իրատեսական արվեստի աշխատանքներ:
- Ստեղծել երկչափ և եռաչափ վերացական/երևակայական աշխատանքներ:
- Կիրառել դիզայնի սկզբունքները Առաջարկվող գործունեության ձևերերում /արդյունաբերական գրաֆիկա/:
- Վերլուծել իր և ընկերների աշխատանքները բոլոր մանրամասներով:
- Դասակարգել կերպարվեստի տեսակները, ժանրերը:
- Քննարկել արվեստի ստեղծագործությունը:
- Ցույց տալ աշխատանքների ուժեղ և թույլ կողմերը:
- Գնահատել ստեղծագործություններն ըստ չափանիշների:
- Ներկայացնել արվեստի դերը առօրյայում:
- Ներկայացնել արվեստի ստեղծագործությունների նշանակությունը պատմության տեսանկյունից:
- Ընտրել ստեղծագործություններ ցուցադրման համար և աշխատել խմբով ցուցահանդես կազմակերպելու նպատակով:
- Առաջարկել խմբային և անհատական ցուցադրությունների հետաքրքիր տարբերակներ:
- Առաջարկել նախագծեր, առավել արդյունավետ ցուցադրելու նպատակով:
- Նշել այն սկզբունքները որոնցով առաջնորդվել է ցուցադրություն կազմակերպելիս:

	Թեմատիկ միավորի անվանում, դասի թեմա (Ի՞ՆՉ)	Սովորողների գործունեություն (ԻՆՉՊԵ՞Ս)	Ակնկալվող վերջնարդյունք (ԻՆՉՈՒ՞)
Կերպարվեստի տեսակներ ժանրեր			
Սեպտեմբեր	Կերպարվեստի ժանրերը և տեսակները: Կերպարվեստի դերը հասարա-կական կյանքում, գործառույթները	ՈՒսումնասիրել կերպարվեստի ժանրերը, գործառույթները	Դասակարգել կերպարվեստի ժանրերը, իմանալ գործառույթները և մեկնաբանել սեփական տեսակյունից
	Բնանկարի կոմպոզիցիա և նյութեր	Բնանկարի տեսակների, տարրերի ուսումնասիրություն: Բնանկարի տեսակների ուսումնասիրություն՝ քաղաքային, գյուղական և այլն, բնանկարի կոմպոզիցիա՝ բաց բնապատկեր, փակ բնապատկեր:	Տարբերակել բնանկարի տեսակները, կոմպոզիցիոն առանձնահատկությունները:
	Բնանկար Գծային և օդային հեռանկար:	Բնանկարի մեջ հեռանկարի օրինաչա-փությունների ուսումնասիրություն: Գունով, ձևով և չափով կրճատումներ	Կիրառել հեռանկարի առանձնահատկությունները սեփական աշխատանքի մեջ: Զարգացնել տեսողական հիշողությունը: Պահպանել հեռանկարի կանոնները:
	Նատյուրմորտ	Ուսուցչի օգնությամբ ոչ բարդ ձև ունեցող մի քանի առարկաներից կազմել նատյուրմորտ: Աշխատելով կերպարի վրա՝ վեր հանել գաղափարական բովանդակությունը: Թեմա ՝ «Մանկություն/ընտանիք»:	Զարգացնել ծավալի հաղորդման հմտություններիը, կոմպոզիցիայի տարրական գիտելիքներիը, նյութականության հաղորդումը
Հոկտեմբեր	Դիմանկար	Կատարել դիմանկար հիշողությամբ՝ “Իմ ընտանիքի անդամները” թեմայով	Տարբեր բնութագրիչների միջոցով արտահայտել և շեշտադրել նախընտրելի կերպարի դեմքի հիմնական համաչափությունները Արտահայտել կերպարի/կերպարների

			բնավորության դեմքի հիմնական համաչափությունները, շեշտադրել կերպարային բնութագրիչները
	Ապլիկացիա, Կոլաժ	Ապլիկացիայի տեխնիկայի և հնարավորությունների միջոցով բնանկարի կոմպոզիցիայի կառուցում, երկու տարբեր կոմպոզիցիոն տարրերի համադրում:	Իմանալ և օգտագործել թղթի հարթությանը երկչափ տարածական կոմպոզիցիա ստանալու կիրառական հնարավորությունները
	Եռաչափ կոլլաժ	Նախապես հավաքած թափոններից (կոտրված խաղալիքներ, բանալի, մատիտ, պլաստիկե թափոններ, թել, սոսնձի, գուաշի և այլ դատարկ տարաներ, կոտրված գործիքներ… այն ամենը, ինչը պետք է դեն նետվի) ստեղծել եռաչափ հորինվածք, ազատ թեմայով՝ կենդանի, տուն, բնանկար, նատյուրմորտ, դիմանկար, երևակայական իրականություն, տիեզերք և այլն:	Զարգացնել ծավալային մտածողությունը
	Վերափոխում Առարկաների ստեղծագործական վերարտադրություն, կերպարի հաղորդում	Ճեպանկարների միջոցով կերպարի որոնում և բնութագրական առանձնահատկությունների շեշտադրում	Զարգացնել շրջապատող միջավայրում գեղեցիկը տեսնելու և այն սեփական տեսանկյունից վերարտադրելու հմտությունները
Նոյեմբեր	Ազգային տարազ	Հասկանալ և վերլուծել ժողովրդական տոնական տարազի կառուցվածքը, տալ նրան գեղագիտական գնահատական: Ստեղծել սեփական տարազի նախագիծ:	Կարողանալ տարազի ձևավորման առանձնա-հատկությունները կապել մեր նախնիների աշխարհայացքի հետ: Կարողանալ բացատրել տարբեր մարզերի տա-րազների միջև ընդհանուրը և առանձնահա-տուկը:
	Ազգային տոնական ծիսակատարություններ	Ստեղծագործական տարբեր աշխատանք-ներում գտնել ընդհանուր հատկանիշներ, դրանցում նշել կոմպոզիցիոն և թեմատիկ	Ազգային տոնը բնութագրել որպես կարևոր իրադարձություն, որպես ստեղծագործության տեսակների սինթեզ:

		առանձնահատկությունները:	
	Մանրանկարչություն	Թռչնագիր: Կրկնօրինակել և ստեղծել սեփական տառատեսակը, օգտագործելով հայ մանրանկարչության մեջ օգտագործվող տարրերը:	Ճանաչել հայ մանրանկարչության ոճական բազմազանությունը, գունային և կոմպոզիցիոն առանձնահատկությունները:
	Խաչքարագործություն	Խաչքարերի ուսումնասիրություն, սեփական էսքիզի ստեղծում և ծեփում կավով կամ պլաստիլինով:	Ուսումնասիրել խաչքարերը որպես հայ միջնադարյան մշակույթի ինքնատիպության խորհրդանիշ:
Դեկտեմբեր	Դրոշներ և զինանշաններ	Դիտարկված զինանշանների մեջ ուսումնասիրել կոմպոզիցիոն կառուցվածքը, ստեղծել դասարանի զինանշանը, օգտագործելով առանձնահատուկ խորհրդանշաններ	Մեկնաբանել զինանշանի տարրերի, օգտագործված խորհրդանշանների նշանակությունը: Ուսումնասիրել դրոշների գույների մեջ օգտագործված փոխաբերական և իմաստային ընկալումը
	Կերպարվեստի տարրեր Գիծ, ձև, ծավալ և տարածություն	Գծի, շտրիխապատման միջոցով ստանած ստանալ ծավալային և տարածական պատկերներ	ՈՒսումնասիրել կերպարվեստի տարրերը որպես ստեղծագործելու, արվեստի աշխատանքներ ստեղծելու միջոց:
	Կերպարվեստի տարրեր Գույն, լույս ու ստվեր, մակերես	Գունանյութով՝ մատիտ, ջրաներկ, պաստել և այլն, ստանալ առարկաների լույսն ու ստվերը, ուսումնասիրելլ նյութականություն հաղորդելու հնարավորությունները:	ՈՒսումնասիրել կերպարվեստի տարրերը որպես ստեղծագործելու, արվեստի աշխատանքներ ստեղծելու միջոց:
	Հեռանկար	Կրճատման ձևերի ուսումնասիրություն: Գույնով, ձևով և չափով կրճատման առանփնահատկությունները, դրանց կիրառությունը արվեստի ստեղծագործություններում	ՈՒսումնասիրել կերպարվեստի տարրերը որպես ստեղծագործելու, արվեստի աշխատանքներ ստեղծելու միջոց:

<table>
<tr><th colspan="2">ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ
ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 5-րդ ԴԱՍԱՐԱՆ
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ 1 ՇԱԲԱԹ</th></tr>
<tr><th colspan="2">ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԺԱՆՐԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ</th></tr>
<tr><th>Նպատակը</th><th>Չափորոշիչներ</th></tr>
<tr><td>Ծանոթություն կերպարվեստի ժանրերին, նրանց առանձնահատկություններին:
Յուրաքանչյուր ժանրի նկարիչների և նրանց ստեղծագործական գործունեության ուսումնասիրություն:</td><td rowspan="3">5-6.Կ.Ս.ՆՄ.1. Օգտագործել տարբեր նյութեր, մոտեցումներ՝ ստեղծագործական աշխատանքներ ստանալու համար /2D, 3D/:
5-6.Կ.Ս.ՆՄ.2. Պատրաստել արվեստի եզրույթների բառարան:
5-6.Կ.Ս.ՆՄ.3. Խնայողաբար վերաբերվել օգտագործվող նյութերին:
5-6.Կ.Ա.ԴՏ.1. Կատարել աշխատանքներ՝ օգտագործելով կերպարվեստի տարրերը՝ հորիզոնի գիծ, լույս ու ստվեր, համաչափություն, հավասարակշռություն, հակադրություն, շարժում, ազդեցություն
5-6.Կ.Ա.ԴՏ.2. Կիրառել դիզայնի սկզբունքները Առաջարկվող գործունեության ձևերերում /արդյունաբերական գրաֆիկա/:
5-6.Կ.Ս.ՆԵ.2. Ստեղծել 2D և 3D վերացական աշխատանքներ:
5-6.Կ.Ս.ՆԵ.3. 2D և 3D երևակայական աշխատանքներ:
5-6.Կ.Ա.ՔԱ.1. Քննարկել արվեստի ստեղծագործությունը:
5-6.Կ.Կ.ԱԴ.3. Ներկայացնել արվեստի դերը առօրյայում:</td></tr>
<tr><td>Ուղղորդող հարցադրում</td></tr>
<tr><td>Կերպարվեստի քանի՞ ժանրեր գիտեք, որոնք են նրանց առանձնահատկություններն ու տարբերությունները
Հայ և արտասահմանյան ի՞նչ նկարիչներ գիտեք և ի՞նչ ժանրի ստեղծագործություններ ունեն:
Որոնք են կերպարվեստի ժանրի թեմատիկ և բովանդակային առանձնահատկությունները</td></tr>
<tr><th colspan="2">ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</th></tr>
<tr><td colspan="2">● Ճանաչել և տարբերակել կերպարվեստի ժանրերը:
● Ցուցադրել տարբեր նյութերով և միջոցներով ստեղծագործական մտքի հաղորդման հմտություններ:
● Ստեղծել կրկնօրինակներ:
● Փորձարկել նյութերը և գործիքները:
● Ցուցադրել ստեղծագործական գաղափարը զարգացնելու, մշակելու և տարբեր ժանրերով ավարտին հասցնելու հմտություններ,
● Գեղարվեստական նյութերի, գործիքների, կերպարվեստի տարրերի և դիզայնի սկզբունքների իմացություն:
● Քննարկել ստեղծագործությունները, որոնք արտահայտված են կերպարվեստի այս կամ այն ժանրում:
● Կատարել հայտնի ստեղծագործությունների կրկնօրինակներ՝ կերպարվեստի ժանրերն առավել արտահայտիչ ներկայացնելով:
● Բանավոր կամ գրավոր մեկնաբանել և թվարկել կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն առաջարկված ստեղծագործություններում, դրանց ազդեցությունն ու նշանակությունը հիմնական գաղափարի վրա:</td></tr>
</table>

Նյութ	Բառարան	Բովանդակություն	Գնահատում
• Տեսասահիկ • Ցուցապաստառ • Դասագիրք • Վերատպություններ	• Բնանկար • Դիմանկար • Նատյուրմորտ • Կենցաղային ժանր • Պատմական ժանր • Կենդանապատկերման ժանր	Հակիրճ ներկայացնել կերպարվեստի ժանրերը, նրանց առանձնահատկությունները: Հաջորդող դասերին ներկայացնել յուրաքանչյուր ժանրի պատմաժամանակագրությունը: **Բնանկար** (ֆրանսերեն՝ paysage, pays - երկիր, տեղանք), տեսարան կամ որևէ տեղանքի պատկեր, գլխավորապես գեղանկարչության և գրաֆիկայի մեջ, ինչպես նաև գեղարվեստական ստեղծագործություն, որի պատկերման առարկան բնությունն է: Շատ անգամ որպես ֆոն է ծառայում հարթաքանդակում, գեղանկարում և գրաֆիկայում: Բնանկարը բնության ձևերի և երևույթների, լույսի, օդի, տարածության գեղարվեստական արտացոլումն է՝ պայմանավորված հեղինակի աշխարհայացքով, մտքերով և զգացմունքով: **Դիմանկարը** (ֆր.՝ portrait, հն. portraire-պատկերել) կոնկրետ մարդու կամ մի խումբ մարդկանց պատկերն է կամ նկարագիրը, որը դրսևոր-վում է կերպարվեստի տեսակների միջոցով՝ գեղանկար, գծանկար, քանդակ, նաև լուսանկարչական արվեստ: Ժանրի առաջնահերթ խնդիրն է պատկերել մարդու բնորոշ դիմագծերը, նմանությունը: **Նատյուրմորտ** (ֆր. nature morte- մեռած բնություն), կերպարվեստի ժանր, հիմնականում հաստոցային գեղանկարում, որտեղ պատկեր-վում է անշարժ, անշունչ առարկաներ՝ սովորաբար տնային կահկարասի, մրգեր, ծաղիկներ, ձկներ, խփված վայրի թռչուններ, որևէ մասնագիտության պիտույքներ: **Կենցաղային ժանր** (ժանրային նկարչություն ֆր.՝ genre բառից) կերպարվեստի ժանր, որ պատկերում է անձնական և հասարակական, առօրյա կյանքը (սովորաբար՝ ժամանակակից նկարչի կողմից): Կենցաղային ժանրում առաջատար է կենցաղային (ժանրային) գեղանկարչությունը, մասամբ՝	Կերպարվեստի ժանրերի թվարկում, դրանց յուրաքանչյուրի ընդհանուր առանձնահատկությունների բնութագրում: Յուրաքանչյուր ժանրով ստեղծագործողի և նրա աշխատանքների թվարկում: **Ռեսուրս** • Հայաստանի ազգային պատկերասրահ Առցանց թանգարաններ և այլ մեդիա ռեսուրսներ:

		գրաֆիկան և քանդակագործությունը: **Պատմական ժանր**, կերպարվեստի հիմնական ժանրերից մեկը՝ նվիրված պատմական իրադարձություններին և գործիչներին հասարակության պատմության սոցիալական նշանակալի երևույթներին: Պատմական ժանր ներառնում է նաև ոչ հեռավոր անցյալի իրադարձությունների պատկերումը: Պատմական ժանրի ստեղծագործությունների հիմնական տեսակներն են՝ պատմական նկարները, որմնանկարները, ռելիեֆներն ու բոլորաքանդակները, հաստոցային գրաֆիկայի գործերը: **Անիմալիստական ժանր** (ֆր.՝ *Animalisme*, լատ.՝ *animal* կենդանի, անասուն), կենդանիների պատկերումը կերպարվեստում:	

Կերպարվեստի ժանրերը

Բնանկարի ժանր

Խաչատուր Եսայան “Աշուն”

Դիմանկարի ժանր

Ռեմբրանդ վան Ռեյն “Ինքնադիմանկար”

Կենցաղային ժանր

Վլադիմիր Մինասյան “Հացթուխներ”

Պատմական ժանր

Վ. Սուրենյանց “Զաբել թագուհու վերադարձը գահին”

Նատյուրմորտի ժանր	Կենդանապատկերման ժանր
 *Հարություն Կալենց “Ծաղիկներ”*	 *Հակոբ Կոջոյան “Գարուն, եղնիկներ”*

Միջառարկայական կապ

Մաթեմատիկա -

Բնագիտություն -

Երաժշտություն -

Առողջ ապրելակերպ -

Տեխնոլոգիա - Ընտրել և օգտագործել համապատասխան նյութեր և ռեսուրսներ դիզայներական և նախագծային աշխատանքի համար:

<table>
<tr><th colspan="2">ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ
ԿԵՐՊԱՐՎԵՍՏ, 5-րդ ԴԱՍԱՐԱՆ
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ 1 ՇԱԲԱԹ</th></tr>
<tr><th colspan="2">ԲՆԱՆԿԱՐԻ ԿՈՄՊՈԶԻՑԻԱ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ</th></tr>
<tr><th>Նպատակը</th><th>Չափորոշիչներ</th></tr>
<tr><td>Տարբեր նյութերով, կոմպոզիցիայի տարբեր միջոցներով բնանկարի, ստեղծագործական մտքի հաղորման հմտությունների ձևավորում:
Բնօրինակից նկարչության հմտությունների զարգացում:
Նյութի ընտրության և դրանով աշխատելու հմտությունների զարգացում:
Հարթության վրա կոմպոզիցիայի ճիշտ կազմակերպում:</td><td rowspan="3">5-6.Կ.Ա.ՆՄ.1. Օգտագործել տարբեր նյութեր, մոտեցումներ՝ ստեղծագործական աշխատանքներ ստանալու համար /2D, 3D/:
5-6.Կ.Ա.ՆՄ.2. Պատրաստել արվեստի եզրույթների բառարան:
5-6.Կ.Ա.ՆՄ.3. Խնայողաբար վերաբերվել օգտագործվող նյութերին:
5-6.Կ.Ա.ՆԵ.1. Ստեղծել 2D և 3D իրատեսական արվեստի աշխատանքներ:
5-6.Կ.Ա.ՆԵ.2. Ստեղծել 2D և 3D վերացական աշխատանքներ:
5-6.Կ.Ա.ՆԵ.3. 2D և 3D երևակայական աշխատանքներ:
5-6.Կ.Ա.ՔԱ.3. Վերլուծել իր և ընկերների աշխատանքները բոլոր մանրամասներով:</td></tr>
<tr><th>Ուղղորդող հարցադրում</th></tr>
<tr><td>Ինչպե՞ս են արվեստագետները/սովորողները նախապատրաստվում, ի՞նչ նյութեր և միջոցներ են օգտագործում:
Ինչպիսի՞ քայլեր են հարկավոր թեմատիկ գաղափարը ստեղծագործության վերածելու համար:
Որոնո՞ք են բնանկարի կոմպոզիցիայի չորս հիմնական տեսակները:
Կա՞ն, արդյոք, գործիքների, նյութերի և տարածքի պահպանման կանոններ:
Կարո՞ղ ենք, արդյոք, համագործակցել և ստեղծագործել միևնույն տարածքում:</td></tr>
<tr><th colspan="2">ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</th></tr>
<tr><td colspan="2">● Ցուցադրել տարբեր նյութերով և միջոցներով ստեղծագործական մտքի հաղորդման հմտություններ:
● Ստանալ ծավալային և հարթ պատկերներ:
● Ձևավորել բնության հանդեպ հոգատար վերաբերմունք:
● Փորձարկել նյութերը և գործիքները:
● Ցուցադրել ստեղծագործական գաղափարը զարգացնելու, մշակելու և ավարտին հասցնելու համար անհրաժեշտ հմտություններ:
● Գեղարվեստական նյութերի, գործիքների, կերպարվեստի տարրերի, կոմպոզիցիայի սկզբունքների իմացություն:
● Անվանել նյութերն ու գործիքները:
● Ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար:
● Համեմատել ու վերլուծել իր և մյուսների կատարած կոմպոզիցիաները:</td></tr>
</table>

- Նյութերն օգտագործել մտածված և խնայողաբար: Աշխատանքն ավարտելուց հետո կարգի բերել տարածքը:
- Ստեղծել արտահայտիչ բնանկարներ և կոմպոզիցիաներ:
- Ստեղծել բնանկարներ, որոնք արտահայտում են տրամադրություն, զգացմունք կամ անձնապես կրած հուզական վերաբերմունք:
- Մեկնաբանել և վերլուծել՝ո՞ր նյութն է հավանում, որը՝ ոչ, կոմպոզիցիայի որ տեսակն է նախընտրում:

Նյութ	Բառարան	Բովանդակություն	Գնահատում
• Մատիտ • Գուաշ • Ջրաներկ • Պաստել • Թուղթ • Վրձին	• Բնանկար • Պլեներ • Կերպ. հմտություններ • Կոմպոզիցիա • Կոլորիտ • Գույն • Դասակարգում • Տարածություն • Կրճատում	Բացօթյա նկարչության պայմաններում ընտրել բնապատկեր, որոշարկել աշխատանքի համար նախընտրելի նյութը: Միևնույն դիտակետից բնանկարի տվյալ տեսարանը նկարել որպես հիմնական բնապատկեր, փակ բնապատկեր, բաց բնապատկեր և հատված բնապատկերից (կոմպոզիցիա) մատիտով, ջրաներկով, գուաշով, պաստելով (նյութ): Ուսումնասիրել տարբեր նյութերով աշխատելու առանձնահատկությունները: Նշված առաջադրանքները կարելի է կատարել տարվա տարբեր եղանակներին (աղյուսակ 1): Արտաժամյա առաջադրանք՝ նկարել երևակայական բնանկար, որտեղ կցանկանար ապրել սովորողը: Մեկնաբանել նկարը և հիմնավորել պատճառները, թե ինչու է ցանկանում ապրել այդ բնանկարում:	Կոմպոզիցիայի ճիշտ կառուցում: Բնօրինակի տարածական ընկալում: Տարբեր նյութերով աշխատելու հմտություններ: Բնօրինակի արտահայտչական վերարտադրում: Բնանկարի կոմպոզիցիայի չորս տեսակների իմացություն/նկարագրություն, աշխատանքի մեջ դրանց որևէ մեկի կիրառություն **Ռեսուրս** • Երևանի բուսաբանական այգի: • ՀՀ արգելոցապարկային համալիրներ: • Շրջակա միջավայրում պլեների կազմակերպում: • Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան • Այցելություն ժամանակակից ստեղծագործողների արվեստանոցներ: • Անհատ ստեղծագործողի հետ հանդիպում դասարանում (վարպետաց դաս): • Առցանց թանգարաններ և այլ մեդիա ռեսուրսներ: • Սարգսյան Ս. Մ. - Բնանկարային գեղանկարչության գործառույթները մանկավարժական գործընթացում, Գեղարվեստական միտք, թիվ 1, Երևան, 2013թ., էջ 1447-148 • Саргсян С. М. - Экологическая функция пейзажной живописи. Actual Pedagogy. №1. Scientific publishing center «Sociosféra-CZ» *Prague, Czech Republic.*

			2016. ст. 85-89 • Sargsyan S. M. - The Methodological Guidebook of the Possible Landscape Painting Tasks from One View. «Наука, образование, общество: тенденции и перспективы развития». РФ, 2019. Ст. 153-156 • https://hy.istanbulbear.org/vozdushnaya-i-lineynaya-perspektiva-vidyi-ponyatie-pravila-izobrajeniya-i-metodyi-naneseniya-nabroskov-11590

Աղյուսակ 1



Հիմնական բնապատկեր	Սեփական աշխատանքի քննարկում	Հատվածի ընտրություն
 Բաց բնապատկեր **Հատված բնապատկերից** 	Քննել, վերլուծել և ներկայացնել սեփական աշխատանքը: Կատարել համեմատություններ, վերլուծել տարբերությունները: Բացահայտել և մեկնաբանել աշխատանքների առավելություններն ու բացթողումները: Թվարկել կոմպոզիցիայի տեսակները Ներկայացնել ընտրված նյութի առանձնահատկությունները: Հիմնավորել նյութի ընտրությունը, բնապատկերի կոմպոզիցիայի այս կամ այն տեսակի ընտրությունը:	 **Փակ բնապատկեր** **Հատվածներ բնապատկերից**

Միջառարկայական կապ

Գրականություն - Ա. Բակունց՝ Լառ Մարգարի պատկերացրած երկինքը, Հ. ՍահյանՆաիրյան դալար բարդի...

Մաթեմատիկա -

Բնագիտություն -

Երաժշտություն -

Առողջ ապրելակերպ -

Տեխնոլոգիա - Ընտրել և օգտագործել համապատասխան նյութեր և ռեսուրսներ դիզայներական և նախագծային աշխատանքի համար:

<table>
<tr><th colspan="2">ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ
ԿԵՐՊԱՐՎԵՍՏ, 5-րդ ԴԱՍԱՐԱՆ
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ 1 ՇԱԲԱԹ</th></tr>
<tr><th colspan="2">ԲՆԱՆԿԱՐԻ ԿՈՄՊՈԶԻՑԻԱ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐ</th></tr>
<tr><td>Նպատակը</td><td>Չափորոշիչներ</td></tr>
<tr><td>Տարբեր նյութերով, կոմպոզիցիայի տարբեր միջոցներով բնանկարի, ստեղծագործական մտքի հաղորման հմտությունների ձևավորում, հեռանկարի արտահայտում:
Բնօրինակից նկարչության հմտությունների զարգացում:
Նյութի ընտրության և դրանով աշխատելու հմտությունների զարգացում:
Հարթության վրա կոմպոզիցիայի ճիշտ կազմակերպում:</td><td rowspan="3">5-6.Կ.Ա.ՆՄ.1. Օգտագործել տարբեր նյութեր, մոտեցումներ՝ ստեղծագործական աշխատանքներ ստանալու համար /2D, 3D/:
5-6.Կ.Ա.ՆՄ.2. Պատրաստել արվեստի եզրույթների բառարան:
5-6.Կ.Ա.ՆՄ.3. Խնայողաբար վերաբերվել օգտագործվող նյութերին:
5-6.Կ.Ա.ՆԵ.1. Ստեղծել 2D և 3D իրատեսական արվեստի աշխատանքներ:
5-6.Կ.Ա.ՆԵ.2. Ստեղծել 2D և 3D վերացական աշխատանքներ:
5-6.Կ.Ա.ՆԵ.3. 2D և 3D երևակայական աշխատանքներ:
5-6.Կ.Ա.ՔԱ.3. Վերլուծել իր և ընկերների աշխատանքները բոլոր մանրամասներով:</td></tr>
<tr><td>Ուղղորդող հարցադրում</td></tr>
<tr><td>Ինչպե՞ս են արվեստագետները/սովորողները նախապատրաստվում, ի՞նչ նյութեր և միջոցներ են օգտագործում:
Ինչպիսի՞ քայլեր են հարկավոր թեմատիկ գաղափարը ստեղծագործության վերածելու համար:
Որոնք՞ են բնանկարի հեռանկարի արտահայտման տարրերը:
Կարո՞ղ ենք, արդյոք, համագործակցել և ստեղծագործել միևնույն տարածքում:</td></tr>
<tr><th colspan="2">ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</th></tr>
<tr><td colspan="2">● Ցուցադրել տարբեր նյութերով և միջոցներով ստեղծագործական մտքի հաղորդման հմտություններ:
● Ստանալ ծավալային և հարթ պատկերներ:
● Ձևավորել բնության հանդեպ հոգատար վերաբերմունք:
● Փորձարկել նյութերը և գործիքները:
● Ցուցադրել ստեղծագործական գաղափարը զարգացնելու, մշակելու և ավարտին հասցնելու համար անհրաժեշտ հմտություններ:
● Գեղարվեստական նյութերի, գործիքների, կերպարվեստի տարրերի, կոմպոզիցիայի սկզբունքների իմացություն:
● Անվանել նյութերն ու գործիքները:
● Ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար:</td></tr>
</table>

- Համեմատել ու վերլուծել իր և մյուսների կատարած կոմպոզիցիաները:
- Նյութերն օգտագործել մտածված և խնայողաբար: Աշխատանքն ավարտելուց հետո կարգի բերել տարածքը:
- Ստեղծել հեռանկարային արտահայտիչ բնանկարներ և կոմպոզիցիաներ:
- Ստեղծել բնանկարներ, որոնք արտահայտում են հեռանկար:
- Մեկնաբանել և վերլուծել՝ո՞ր նյութն է հավանում, որը՝ ոչ, կոմպոզիցիայի որ տեսակն է նախընտրում:

Նյութ	Բառարան	Բովանդակություն	Գնահատում
• Մատի • Գուաշ • Ջրաներկ • Պաստել • Թուղթ • Վրձին	• Բնանկար • Պլեներ • Կերպ. հմտություններ • Կոմպոզիցիա • Կոլորիտ • Գույն • Դասակարգում • Տարածություն • Կրճատում	Բացօթյա նկարչության պայմաններում ընտրել բնապատկեր, որոշարկել աշխատանքի համար նախընտրելի նյութը: Սովորողներին ծանոթացնել գծային և օդային հեռանկարի առանձնահատկություններին և օրինաչափություններին: Ընդլայնել բնանկարի մասին սովորողների գիտելիքները: Ընտրված տեսարանը նկարել հեռանկարային արտակայտչականությամբ, կիրառելով կրճատման օրինաչափությունները՝ գույնով, ձևով, չափով: Գշային հեռանկար - ձևոի և չափի փոփոխություններ: Օդային հեռանկար - գույնի և երանգի փոփոխություններ: Այն, ինչ գտնվում է հեռավորության վրա, մարդու աչքը ի վիճակի չէ տարբերակել, ուստի այն պատկերված է մշուշոտ: Հեռավոր օբյեկտների՝ ծառ, տուն և այլն, ուրվագծերը չպետք է շատ պարզ լինեն: Օդային և գծային հեռանկարները թույլ են տալիս ստեղծել կտավներ, որոնք ճշգրտորեն փոխանցում են առարկաների ծավալը և ընդօրինակում լրացուցիչ իրականության պատրանքը	Կոմպոզիցիայի ճիշտ կառուցում: Հեռանկարի արտահայտիչ պատկերում: Բնօրինակի տարածական ընկալում: Տարբեր նյութերով աշխատելու հմտություններ: Բնօրինակի արտահայտչական վերարտադրում: **Ռեսուրս** • Երևանի բուսաբանական այգի: • ՀՀ արգելոցապարկային համալիրներ: • Շրջակա միջավայրում պլեների կազմակերպում: • Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան • Այցելություն ժամանակակից ստեղծագործողների արվեստանոցներ: • Անհատ ստեղծագործողի հետ հանդիպում դասարանում (վարպետաց դաս): • Առցանց թանգարաններ և այլ մեդիա ռեսուրսներ: • Սարգսյան Ս. Մ. - Բնանկարային գեղանկարչության գործառույթները մանկավարժական գործընթացում, Գեղարվեստական միտք, թիվ 1, Երևան, 2013թ., էջ 1447-148 • Саргсян С. М. - Экологическая функция пейзажной живописи. Actual Pedagogy. №1.

			Scientific publishing center «Sociosféra-CZ» *Prague, Czech Republic*. 2016. ст. 85-89 ● Sargsyan S. M. - The Methodological Guidebook of the Possible Landscape Painting Tasks from One View. «Наука, образование, общество: тенденции и перспективы развития». РФ, 2019. Ст. 153-156 ● https://hy.istanbulbear.org/vozdushnaya-i-lineynaya-perspektiva-vidyi-ponyatie-pravila-izobrajeniya-i-metodyi-naneseniya-nabroskov-11590 ● https://aminoapps.com/c/artrus/page/item/lineinaia-i-vozdushnaia-perspektiva-v-peizazhe/oLl1_EJSoIQdkVBJQDEvQJLZNvbXbR713d ●

Հեռանկարի պատկերման օրինակներ	Սեփական աշխատանքի քննարկում	Աշակերտների կատարած աշխատանքներ
 Պիտեր Բրեյգել, “Ձմեռային բնանկար”  **Մ. Սարյան, “Փողոց, կեսօր”**	Քննել, վերլուծել և ներկայացնել սեփական աշխատանքը: Կատարել համեմատություններ, վերլուծել տարբերությունները: Նշել հեռանկարային առանձնահատկությունները: Բացահայտել և մեկնաբանել աշխատանքների առավելություններն ու բացթողումները: Թվարկել հեռանկարի արտահայտման տարրերը: Ներկայացնել ընտրված նյութի առանձնահատկությունները: Հիմնավորել նյութի ընտրությունը, բնապատկերի կոմպոզիցիայի այս կամ այն տեսակի ընտրությունը:	

Միջառարկայական կապ

Գրականություն - Ա. Բակունց՝ Լառ Մարգարի պատկերացրած երկինքը, Հ. Սահյան Նաիրյան դալար բարդի...
Մաթեմատիկա -
Բնագիտություն -
Երաժշտություն -
Ֆիզկուլտուրա -
Առողջ ապրելակերպ -
Տեխնոլոգիա - Ընտրել և օգտագործել համապատասխան նյութեր և ռեսուրսներ դիզայներական և նախագծային աշխատանքի համար:

<table>
<tr><th colspan="2">ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ
ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 5-րդ ԴԱՍԱՐԱՆ
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ 1 ՇԱԲԱԹ</th></tr>
<tr><th colspan="2">Նատյուրմորտի ժանր</th></tr>
<tr><th>Նպատակը</th><th>Չափորոշիչներ</th></tr>
<tr><td>Ծանոթություն նատյուրմորտի ժանրին, առանձնահատկություններին, պատմաժամանակագրությանը
Նատյուրմորտի ժանրի հայ և արտասահմանյան նկարիչների և նրանց ստեղծագործական գործունեության ուսումնասիրություն:
Թեմատիկ նատյուրմորտի պատկերում</td><td rowspan="3">5-6.Կ.Ս.ՆՄ.1. Օգտագործել տարբեր նյութեր, մոտեցումներ՝ ստեղծագործական աշխատանքներ ստանալու համար /2D, 3D/:
5-6.Կ.Ս.ՆՄ.2. Պատրաստել արվեստի եզրույթների բառարան:
5-6.Կ.Ս.ՆՄ.3. Խնայողաբար վերաբերվել օգտագործվող նյութերին:
5-6.Կ.Ա.ԴՏ.1. Կատարել աշխատանքներ՝ օգտագործելով կերպարվեստի տարրերը՝ հորիզոնի գիծ, լույս ու ստվեր, համաչափություն, հավասարակշռություն, հակադրություն, շարժում, ազդեցություն
5-6.Կ.Ա.ԴՏ.2. Կիրառել դիզայնի սկզբունքները Առաջարկվող գործունեության ձևերերում /արդյունաբերական գրաֆիկա/:
5-6.Կ.Ս.ՆԵ.2. Ստեղծել 2D և 3D վերացական աշխատանքներ:
5-6.Կ.Ս.ՆԵ.3. 2D և 3D երևակայական աշխատանքներ:
5-6.Կ.Ա.ՔԱ.1. Քննարկել արվեստի ստեղծագործությունը:
5-6.Կ.Կ.ԱԴ.3. Ներկայացնել արվեստի դերը առօրյայում:</td></tr>
<tr><td>Ուղղորդող հարցադրում</td></tr>
<tr><td>Ո՞րոնք են նատյուրմորտի ժանրային առանձնահատկություններն ու տարբերությունները այլ ժանրերի հետ համեմատության մեջ:
Հայ և արտասահմանյան ի՞նչ նկարիչներ գիտեք, ովքեր իրենց ստեղծագործություններում անդրադարձել են նատյուրմորտի ժանրին:
Որոնք են նատյուրմորտի ժանրի թեմատիկ և բովանդակային առանձնահատկությունները</td></tr>
<tr><th colspan="2">ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</th></tr>
<tr><td colspan="2">● Ճանաչել և տարբերակել նատյուրմորտի ժանրերը:
● Ցուցադրել տարբեր նյութերով և միջոցներով ստեղծագործական մտքի հաղորդման հմտություններ:
● Ստեղծել կրկնօրինակներ:
● Փորձարկել նյութերը և գործիքները:
● Ցուցադրել ստեղծագործական գաղափարը զարգացնելու, մշակելու և նատյուրմորտի ժանրով ավարտին հասցնելու հմտություններ:
● Գեղարվեստական նյութերի, գործիքների, կերպարվեստի տարրերի և դիզայնի սկզբունքների իմացություն:
● Քննարկել նատյուրմորտի ժանրի ստեղծագործությունները:
● Կատարել նատյուրմորտի ժանրի հայտնի ստեղծագործությունների կրկնօրինակներ:
● Բանավոր կամ գրավոր մեկնաբանել և թվարկել կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն առաջարկված ստեղծագործություններում, դրանց ազդեցությունն ու նշանակությունը հիմնական գաղափարի վրա:</td></tr>
</table>

Նյութ	Բառարան	Բովանդակություն	Գնահատում
• Ջրաներկ • Գուաշ • Մատիտ • Վրձին • Թուղթ • Պաստել	• Կերպարվեստի ժանրեր • Նատյուրմորտ • Կոմպոզիցիա • Կոլորիտ • Համաչափություն • Ծավալ • Նյութականություն	Ներկայացնել նատյուրմորտի ժանրի առանձնահատկությունները և պատմաժամանակագրությունը: Նատյուրմորտի ժանրի օրինաչափությունների ուսումնասիրություններ, ճեպանկարների և էսքիզների կատարում: Հարթության մեջ նատյուրմորտի տեղադրման օրենքների ուսումնասիրություն հորիզոնական և ուղղահայաց առանցքներով: **Նատյուրմորտ** (ֆր. nature morte- մեռած բնություն), կերպարվեստի ժանր, հիմնականում հաստոցային գեղանկարում, որտեղ պատկերվում է անշարժ, անշունչ առարկաներ՝ սովորաբար տնային կահկարասի, մրգեր, ծաղիկներ, ձկներ, խփված վայրի թռչուններ, որևէ մասնագիտության պիտույքներ: Այս աշխատանքը սկսելուց առաջ անհրաժեշտ է նախ և առաջ խորապես ուսումնասիրել առաջարկվեղ թեման՝ մանկություն/ընտանիք (թեման կարող է փոխվել) իրականության մեջ, խորապես զգալ և իմաստավորել այն, վեր հանելով այս կամ այն վերաբերմունքը նրա նկատմամբ, այսինքն գտնել նատյուրմորտի գաղափարայնությունը: Նատյուրմորտի առարկաների ընտրությամբ և նրանց համապատասխան միջավայրում տեղաբաշխումով կարելի է ստեղծել կերպարներ մանկության/ընտանիքի ամենատարբեր լուծումներով: Առանձին, ամբողջությունից զուրկ առարկաները պետք է այնպես տեղաբաշխել, որպեսզի նրանք կապակցվեն միմյանց, միասնական բովանդակային և կերտողական հարաբերությամբ, ամբողջական՝ նատյուրմորտի գաղափարական բովանդակության արտահայտմամբ: Անհրաժեշտ է նաև նատյուրմորտում գաղափարա-նպատակաուղղվածությամբ կազմակերպել գունային և երանգային համահնչողականությունը՝ տարածության մեջ ծավալային ձևերի, գունային և երանգային հարաբերությունների կազմակերպում, տարածական հարթությունների հստակություն, լույսի ուղղորդում:	Կերպարվեստի ժանրերի թվարկում, դրանց յուրաքանչյուրի ընդհանուր առանձնահատկությունների բնութագրում: Յուրաքանչյուր ժանրով ստեղծագործողի և նրա աշխատանքների թվարկում: **Ռեսուրս** • Հայաստանի ազգային պատկերասրահ • Առցանց թանգարաններ և այլ մեդիա ռեսուրսներ:

Նատյուրմորտի ժանր	
 *Մարտիրոս Սարյան “Կանաչ սափոր և ծաղկեփունջ”* *Պյոտր Կոնչալովսկի “Եղրևանի”*	 *Հորինել նատյուրմորտի թեման*  *Կերպավորել նատյուրմորտի առարկաները*

 Վինսենտ Վան Գոգ “Թրաշուշաններով նպոյուրմորդ”	 ***Գունանին ի՞նչ խնդիր է առաջադրված***
Միջառարկայական կապ	
Մաթեմատիկա - **Բնագիտություն** - **Երաժշտություն -** **Առողջ ապրելակերպ** - **Տեխնոլոգիա -** Ընտրել և օգտագործել համապատասխան նյութեր և ռեսուրսներ դիզայներական և նախագծային աշխատանքի համար:	

<table>
<tr><th colspan="2">ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ
ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 5-րդ ԴԱՍԱՐԱՆ
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ 1 ՇԱԲԱԹ</th></tr>
<tr><th colspan="2">Դիմանկարի ժանր</th></tr>
<tr><th>Նպատակը</th><th>Չափորոշիչներ</th></tr>
<tr><td>Ծանոթություն նդիմանկարի ժանրին, առանձնահատկություններին, պատմաժամանակագրությանը
Դիմանկարի ժանրի հայ և արտասահմանյան նկարիչների և նրանց ստեղծագործական գործունեության ուսումնասիրություն:
Դիմանկարի պատկերում հիշողությամբ և երևակայությամբ:</td><td rowspan="3">5-6.Կ.Ս.ՆՄ.1. Օգտագործել տարբեր նյութեր, մոտեցումներ՝ ստեղծագործական աշխատանքներ ստանալու համար /2D, 3D/:
5-6.Կ.Ս.ՆՄ.2. Պատրաստել արվեստի եզրույթների բառարան:
5-6.Կ.Ս.ՆՄ.3. Խնայողաբար վերաբերվել օգտագործվող նյութերին:
5-6.Կ.Ա.ԴՏ.1. Կատարել աշխատանքներ՝ օգտագործելով կերպարվեստի տարրերը՝ հորիզոնի գիծ, լույս ու ստվեր, համաչափություն, հավասարակշռություն, հակադրություն, շարժում, ազդեցություն
5-6.Կ.Ա.ԴՏ.2. Կիրառել դիզայնի սկզբունքները Առաջարկվող գործունեության ձևերերում /արդյունաբերական գրաֆիկա/:
5-6.Կ.Ս.ՆԵ.2. Ստեղծել 2D և 3D վերացական աշխատանքներ:
5-6.Կ.Ս.ՆԵ.3. 2D և 3D երևակայական աշխատանքներ:
5-6.Կ.Ա.ՔԱ.1. Քննարկել արվեստի ստեղծագործությունը:
5-6.Կ.Կ.ԱԴ.3. Ներկայացնել արվեստի դերը առօրյայում:</td></tr>
<tr><th>Ուղղորդող հարցադրում</th></tr>
<tr><td>Ո՞րոնք են դիմանկարի ժանրային առանձնահատկություններն ու տարբերությունները այլ ժանրերի հետ համեմատության մեջ:
Հայ և արտասահմանյան ի՞նչ նկարիչներ գիտեք, ովքեր իրենց ստեղծագործություններում անդրադարձել են դիմանկարի ժանրին:
Որոնք են դիմանկարի ժանրի թեմատիկ և բովանդակային առանձնահատկությունները</td></tr>
<tr><th colspan="2">ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</th></tr>
<tr><td colspan="2">● Ճանաչել և տարբերակել դիմանկարի ժանրերը:
● Ցուցադրել տարբեր նյութերով և միջոցներով ստեղծագործական մտքի հաղորդման հմտություններ:
● Ստեղծել կրկնօրինակներ:
● Փորձարկել նյութերը և գործիքները:
● Ցուցադրել ստեղծագործական գաղափարը զարգացնելու, մշակելու և դիմանկարի ժանրով ավարտին հասցնելու հմտություններ:
● Գեղարվեստական նյութերի, գործիքների, կերպարվեստի տարրերի և դիզայնի սկզբունքների իմացություն:
● Քննարկել դիմանկարի ժանրի ստեղծագործությունները:
● Կատարել դիմանկարի ժանրի հայտնի ստեղծագործությունների կրկնօրինակներ:
● Բանավոր կամ գրավոր մեկնաբանել և թվարկել կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն առաջարկված ստեղծագործություններում, դրանց ազդեցությունն ու նշանակությունը հիմնական գաղափարի վրա:</td></tr>
</table>

Նյութ	Բառարան	Բովանդակություն	Գնահատում
• Ջրաներկ • Գուաշ • Մատիտ • Վրձին • Թուղթ • Պաստել	• Կերպարվեստի ժանրեր • Դիմանկար • Ինքնադիմանկար • Խմբային դիմանկար • Կոմպոզիցիա • Կոլորիտ • Համաչափություն	Ներկայացնել Դիմանկարի ժանրի առանձնահատկությունները և պատմաժամանակագրությունը: **Դիմանկարը** (ֆր.՝ portrait, հն. portraire-պատկերել) կոնկրետ մարդու կամ մի խումբ մարդկանց պատկերն է կամ նկարագիրը, որը դրսևորվում է կերպարվեստի տեսակների միջոցով՝ գեղանկար, գծանկար, քանդակ, նաև լուսանկարչական արվեստ: Ժանրի առաջնահերթ խնդիրն է պատկերել մարդու բնորոշ դիմագծերը, նմանությունը:	Կերպարվեստի ժանրերի թվարկում, դրանց յուրաքանչյուրի ընդհանուր առանձնահատկությունների բնութագրում: Յուրաքանչյուր ժանրով ստեղծագործողի և նրա աշխատանքների թվարկում: **Ռեսուրս**

	• Ծավալ • Նյութականություն	Առաջադրանքը սկսելուց առաջ աշակերտներին ներկայացնել դեմքի հիմնական համաչափական կանոները, դեմքի պատկերման դիմահայաց, կողային և ¾ դիտակետերից պատկերման առանձնահատկությունները: Արտաժամյա առաջադրանք՝ նկարագրել պատկերված դիմանկարի և տվյալ հերոսի նմանություններն ու հիմնական կերպարային առանձնահատկությունները:	• Հայաստանի ազգային պատկերասրահ • Առցանց թանգարաններ և այլ մեդիա ռեսուրսներ:

Դիմանկարի ժանր	
 Հակոբ Հովնաթանյան “Ներսես Աշտարակեցու դիմանկարը”	 *Հովհաննես Այվազովսկի “Նկարչի կնոջ դիմանկարը”*
 Յան Վերմեր “Մարգարտե ականջողով աղջիկը”	 *Վինսենտ Վան Գոգ “Ինքնադիմանկար”*

 ***Նաթանիել Զիխել “Արևելյան գեղեցկուհի”***	 ***Պաբլո Պիկասո “Մարի-Թերեզ Վալտերի դիմանկարը”***
Միջառարկայական կապ	
Մաթեմատիկա - **Բնագիտություն** - **Երաժշտություն -** **Առողջ ապրելակերպ** - **Տեխնոլոգիա -** Ընտրել և օգտագործել համապատասխան նյութեր և ռեսուրսներ դիզայներական և նախագծային աշխատանքի համար:	

<table>
<tr><th colspan="2">ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ
ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 5-րդ ԴԱՍԱՐԱՆ
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ 1 ՇԱԲԱԹ</th></tr>
<tr><th colspan="2">Ապլիկացիայի արտահայտչական հնարավորությունները</th></tr>
<tr><th>Նպատակը</th><th>Չափորոշիչներ</th></tr>
<tr><td>Ստեղծագործական աշխատանքներում կերպարվեստի և դիզայնի տարրերի գրագետ կիրառում:
Լույսի և ստվերի ուսումնասիրություն, պատկերներին ծավալ հաղորդելու հմտությունների ձևավորում:
Արտահայտիչ աշխատանքներ ստեղծելու հմտությունների ձևավորում:
Բնապահպանական ընկալման գործում կերպարվեստի առանձնահատուկ դերի արժևորում:</td><td rowspan="2">5-6.Կ.Ս.ՆՄ.1. Օգտագործել տարբեր նյութեր, մոտեցումներ՝ ստեղծագործական աշխատանքներ ստանալու համար /2D, 3D/:
5-6.Կ.Ս.ՆՄ.2. Պատրաստել արվեստի եզրույթների բառարան:
5-6.Կ.Ս.ՆՄ.3. Խնայողաբար վերաբերվել օգտագործվող նյութերին:
5-6.Կ.Ա.ԴՏ.1. Կատարել աշխատանքներ՝ օգտագործելով կերպարվեստի տարրերը՝ հորիզոնի գիծ, լույս ու ստվեր, համաչափություն, հավասարակշռություն, հակադրություն, շարժում, ազդեցություն
5-6.Կ.Ա.ԴՏ.2. Կիրառել դիզայնի սկզբունքները Առաջարկվող գործունեության ձևերերում /արդյունաբերական գրաֆիկա/:
5-6.Կ.Ս.ՆԵ.2. Ստեղծել 2D և 3D վերացական աշխատանքներ:
5-6.Կ.Ս.ՆԵ.3. 2D և 3D երևակայական աշխատանքներ:</td></tr>
<tr><th>Ուղղորդող հարցադրում</th></tr>
<tr><td>Ինչպիսի՞ քայլեր են հարկավոր թեմատիկ գաղափարը ստեղծագործության վերածելու համար:
Ի՞նչ հիմնարար գիտելիքներ են հարկավոր գրագետ ստեղծագործական աշխատանք կատարելու համար:
Ինչպե՞ս է դիզայնի սկզբունքների իմացությունն ազդում դեկորատիվ աշխատանքների արտահայտչականության վրա:</td></tr>
<tr><th colspan="2">ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</th></tr>
<tr><td colspan="2">● Ցուցադրել տարբեր նյութերով և միջոցներով ստեղծագործական մտքի հաղորդման հմտություններ:
● Ստանալ ավարտուն ծավալային և հարթ պատկերներ:
● Փորձարկել նյութերը և գործիքները:
● Ցուցադրել ստեղծագործական գաղափարը զարգացնելու, մշակելու և ավարտին հասցնելու համար անհրաժեշտ են տարբեր մեթոդների, գեղարվեստական նյութերի, գործիքների, կերպարվեստի տարրերի և դիզայնի սկզբունքների իմացություն:
● Անվանել նյութերն ու գործիքները:
● Ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար:
● Համեմատել պատկերները:</td></tr>
</table>

- Նյութերն օգտագործել մտածված և խնայողաբար: Աշխատանքն ավարելուց հետո կարգի բերել տարածքը:
- Ստանալ ճանաչելի հարթ և ծավալային պատկերներ ու հորինվածքներ՝ ապահովելով ծավալ, տոն, տարածություն, ռիթմ և ամբողջականություն:
- Կիրառել գուներանգները աշխանանքներին հուզականություն հաղորդելու համար:
- Կատարել հայտնի ստեղծագործությունների կրկնօրինակներ՝ կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն առավել արտահայտիչ ներկայացնելով:
- Բանավոր կամ գրավոր մեկնաբանել և թվարկել կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն առաջարկված ստեղծագործություններում, դրանց ազդեցությունն ու նշանակությունը հիմնական գաղափարի վրա:
- Ստեղծել երևակայության և զգացմունքների վրա հիմնված աշխատանքներ, որոնք արտահայտում են տրամադրություն, զգացմունք կամ անձնապես կրած հուզական վերաբերմունք:

Նյութ	Բառարան	Բովանդակություն	Գնահատում
• Լուսանկարներ • Սոսինձ • Մկրատ • Մատիտ • Գուաշ • Թուղթ • Ստվարաթուղթ • Վրձին	• Ապլիկացիա • Ծավալ • Կոմպոզիցիա • Դասակարգում • Լույս ու ստվեր • Համաչափություն • Հավասարակշռություն	Ուսումնասիրել ձեռքի տակ ունեցած կամ նախապես տպած բնանկարի և քաղաքային տեսարանների լուսանկարները: Մտովի համադրել և որոշել, թե քաղաքային ո՞ր տեսարանը բնապատկերի որ տեսարանի հետ կարելի է զուգորդել: Կտրել կամ պատռել բնության նախընտրելի հատվածը և սոսնձել քաղաքային տեսարանի նախատեսված հատվածում, կամ հակառակը՝ քաղաքային տեսարանից կտրել կամ պատռել և սոսնձել բնապատկերի վրա: Աշխատանքը նախընտրելի է կատարել գունավոր լուսանկարներով, սև և սպիտակ վերատպություններով աշխատելու դեպքում՝ **վերջնական ստացված տեսարանը արտանկարել այլ թղթի վրա, զարգացնել կոմպոզիցիան և աշխատել գույնով:**	Երևակայություն: Տարածական ընկալում: Ծավալային ընկալում: Գունազգացողություն: Զննողականություն: Զուգորդական մտածողություն: Ստեղծագործական մտածողություն: **Ռեսուրս** • Երվանդ Քոչարի թանգարան • Այցելություն ժամանակակից ստեղծագործողների արվեստանոցներ: • Անհատ ստեղծագործողի հետ հանդիպում դասարանում (վարպետաց դաս): Առցանց թանգարաններ և այլ մեդիա ռեսուրսներ:

Սեփական աշխատանքի քննարկում

Քննել, վերլուծել և ներկայացնել սեփական աշխատանքը: Կատարել համեմատություններ, վերլուծել տարբերությունները:
Բացահայտել և մեկնաբանել աշխատանքների առավելություններն ու բացթողումները:
Հիմնավորել նյութի ընտրությունը կոմպոզիցիայի կառուցվածքը:

Միջառարկայական կապ

Մաթեմատիկա -
Բնագիտություն -
Երաժշտություն -
Առողջ ապրելակերպ -
Տեխնոլոգիա - Ընտրել և օգտագործել համապատասխան նյութեր և ռեսուրսներ դիզայներական և նախագծային աշխատանքի համար:

Օժանդակ նյութեր

ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 5-րդ ԴԱՍԱՐԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ 1 ՇԱԲԱԹ	
ՏԱՐԱԾԱԿԱՆ ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ (ԿՈԼԼԱԺ)	
Նպատակը	**Չափորոշիչներ**
Ստեղծագործական աշխատանքներում կերպարվեստի և դիզայնի տարրերի գրագետ կիրառում: Լույսի և ստվերի ուսումնասիրություն, պատկերներին ծավալ հաղորդելու հմտությունների ձևավորում: Արտահայտիչ աշխատանքներ ստեղծելու հմտությունների ձևավորում: Բնապահպանական ընկալման գործում կերպարվեստի առանձնահատուկ դերի արժևորում:	**5-6.Կ.Ս.ՆՄ.1.** Օգտագործել տարբեր նյութեր, մոտեցումներ՝ ստեղծագործական աշխատանքներ ստանալու համար /2D, 3D/: **5-6.Կ.Ս.ՆՄ.2.** Պատրաստել արվեստի եզրույթների բառարան: **5-6.Կ.Ս.ՆՄ.3.** Խնայողաբար վերաբերվել օգտագործվող նյութերին: **5-6.Կ.Ա.ԴՏ.1.** Կատարել աշխատանքներ՝ օգտագործելով կերպարվեստի տարրերը՝ հորիզոնի գիծ, լույս ու ստվեր, համաչափություն, հավասարակշռություն, հակադրություն, շարժում, ազդեցություն **5-6.Կ.Ա.ԴՏ.2.** Կիրառել դիզայնի սկզբունքները Առաջարկվող գործունեության ձևերերում /արդյունաբերական գրաֆիկա/: **5-6.Կ.Ս.ՆԵ.2.** Ստեղծել 2D և 3D վերացական աշխատանքներ: **5-6.Կ.Ս.ՆԵ.3.** 2D և 3D երևակայական աշխատանքներ:
Ուղղորդող հարցադրում	
Ինչպիսի՞ քայլեր են հարկավոր թեմատիկ գաղափարը ստեղծագործության վերածելու համար: Ի՞նչ հիմնարար գիտելիքներ են հարկավոր գրագետ ստեղծագործական աշխատանք կատարելու համար: Ինչպե՞ս է դիզայնի սկզբունքների իմացությունն ազդում դեկորատիվ աշխատանքների արտահայտչականության վրա:	
ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	
● Ստանալ ծավալային և հարթ պատկերներ: ● Ցուցադրել տարբեր նյութերով և միջոցներով ստեղծագործական մտքի հաղորդման հմտություններ: ● Ստանալ ավարտուն ծավալային և հարթ պատկերներ: ● Ստեղծել կրկնօրինակներ: ● Փորձարկել նյութերը և գործիքները: ● Ցուցադրել ստեղծագործական գաղափարը զարգացնելու, մշակելու և ավարտին հասցնելու համար անհրաժեշտ են տարբեր մեթոդների, գեղարվեստական նյութերի, գործիքների, կերպարվեստի տարրերի և դիզայնի սկզբունքների իմացություն:	

- Անվանել նյութերն ու գործիքները:
- Ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար:
- Համեմատել պատկերները:
- Նյութերն օգտագործել մտածված և խնայողաբար: Աշխատանքն ավարելուց հետո կարգի բերել տարածքը:
- Ստանալ ճանաչելի հարթ և ծավալային պատկերներ ու հորինվածքներ՝ ապահովելով ծավալ, տոն, տարածություն, ռիթմ և ամբողջականություն:
- Կիրառել գուներանգները աշխանանքներին հուզականություն հաղորդելու համար:
- Ստեղծել հորինվածքներ, գաղափարներն արտահայտելով կերպարվեստի տարրերի ու սկզբունքների կիրառմամբ:
- Կատարել հայտնի ստեղծագործությունների կրկնօրինակներ՝ կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն առավել արտահայտիչ ներկայացնելով:
- Բանավոր կամ գրավոր մեկնաբանել և թվարկել կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն առաջարկված ստեղծագործություններում, դրանց ազդեցությունն ու նշանակությունը հիմնական գաղափարի վրա:
- Ստեղծել երևակայության և զգացմունքների վրա հիմնված աշխատանքներ, որոնք արտահայտում են տրամադրություն, զգացմունք կամ անձնապես կրած հուզական վերաբերմունք:

Նյութ	**Բառարան**	**Բովանդակություն**	**Գնահատում**
• Մատիտ • Գուաշ/ակրիլ • Թուղթ • Ստվարաթուղթ • Վրձին • Սոսինձ • Բինտ • Պլաստիկե և այլ	• Կոլլաժ • Ապլիկացիա • Ծավալ • Կոմպոզիցիա • Դասակարգում • Լույս ու ստվեր • Համաչափություն • Հավասարակշռություն	Ստեղծել հորինվածքներ, գաղափարներն արտահայտելով կերպարվեստի տարրերի ու սկզբունքների կիրառմամբ: Ստանալ ճանաչելի ծավալային պատկերներ ու հորինվածքներ՝ ապահովելով ծավալ, երանգ, տարածություն, ռիթմ և ամբողջականություն: Կիրառել գուներանգները աշխանանքներին հուզականություն հաղորդելու համար: Գունային	Երևակայություն: Տարածական ընկալում: Ծավալային ընկալում: Գունազգացողություն: Զննողականություն: Զուգորդական մտածողություն: Ստեղծագործական մտածողություն: **Ռեսուրս**

թափոններ:		և գծային հնարներով ապահովել հորինվածքի պատկերային կամ թեմատիկ ազդեցությունը: Էսքիզի ստեղծում: Էսքիզի հիման վրա նախագծում և մակետավորում: Ծավալի և/կամ կերպարի հաղորդում: Նյութի մեջ ապագա ստեղծագործության կերպարը տեսնելու և թափոններից հորինվածքը կառուցելու հմտությունների ձևավորում:	• Երվանդ Քոչարի թանգարան • Այցելություն ժամանակակից ստեղծագործողների արվեստանոցներ: • Անհատ ստեղծագործողի հետ հանդիպում դասարանում (վարպետաց դաս): • Առցանց թանգարաններ և այլ մեդիա ռեսուրսներ:

ԷՍՔԻԶ



ՆԱԽԱԳԾՈՒՄ



ՄԱԿԵՏԱՎՈՐՈՒՄ



ԾԱՎԱԼԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ



ԿԵՐՊԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ



Երվանդ Քոչար	Սեփական աշխատանքի քննարկում	Առաջադրանքի օրինակ
 	Քննել, վերլուծել և ներկայացնել սեփական աշխատանքը: Կատարել համեմատություններ, վերլուծել տարբերությունները: Բացահայտել և մեկնաբանել աշխատանքների առավելություններն ու բացթողումները: Հիմնավորել նյութի ընտրությունը կոմպոզիցիայի կառուցվածքը:	**Քայլ 1** **Քայլ 2** **Քայլ 3** **Քայլ 4**

Միջառարկայական կապ

Մաթեմատիկա -
Բնագիտություն -
Երաժշտություն -
Առողջ ապրելակերպ -
Տեխնոլոգիա - Ընտրել և օգտագործել համապատասխան նյութեր և ռեսուրսներ դիզայներական և նախագծային աշխատանքի համար:

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ
ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 5-րդ ԴԱՍԱՐԱՆ
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ 1 ՇԱԲԱԹ

ՎԵՐԱՓՈԽՈՒ: Պատկեր և ծավալ	
Նպատակը	**Չափորոշիչներ**
Բացատրել իրատեսական, վերացական և երևակայական 2D և 3D աշխատանքներ ստեղծելու առանձնահատկությունները: Եռաչափ տարածական մտածողության զարգացում, նախագծային աշխատանքի իրականացման հմտությունների ձևավորում	**5-6.Կ.Ս.ՆՄ.1.** Օգտագործել տարբեր նյութեր, մոտեցումներ՝ ստեղծագործական աշխատանքներ ստանալու համար /2D, 3D/: **5-6.Կ.Ս.ՆՄ.2.** Պատրաստել արվեստի եզրույթների բառարան: **5-6.Կ.Ս.ՆՄ.3.** Խնայողաբար վերաբերվել օգտագործվող նյութերին: **5-6.Կ.Ա.ԴՏ.1.** Կատարել աշխատանքներ՝ օգտագործելով կերպարվեստի տարրերը՝ հորիզոնի գիծ, լույս ու ստվեր, համաչափություն, հավասարակշռություն, հակադրություն, շարժում, ազդեցություն **5-6.Կ.Ա.ԴՏ.2.** Կիրառել դիզայնի սկզբունքները Առաջարկվող գործունեության ձևերերում /արդյունաբերական գրաֆիկա/: **5-6.Կ.Ս.ՆԵ.2.** Ստեղծել 2D և 3D վերացական աշխատանքներ: **5-6.Կ.Ս.ՆԵ.3.** 2D և 3D երևակայական աշխատանքներ: **5-6.Կ.Ա.ՔԱ.1.** Քննարկել արվեստի ստեղծագործությունը: **5-6.Կ.Կ.ԱԴ.3.** Ներկայացնել արվեստի դերը առօրյայում:
Ուղղորդող հարցադրում	
Ինչպե՞ս են արվեստագետները ստեղծագործում: Ինչպե՞ս են արվեստագետները կռահում. որ աշխատանքը հաջողված է: Կարելի՞ է արդյոք, սովորել սեփական սխալների վրա: Հնարավո՞ր է պատկերել զգացողություն:	

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Ստանալ ծավալային և հարթ պատկերներ:
- Ստեղծել կրկնօրինակներ:
- Փորձարկել նյութերը և գործիքները:
- Հավաքել, տեսակավորել, ընտրել նյութերը և գործիքները:
- Նկարագրել և բացատրել աշխատանքի ընթացքը:
- Արտահայտել իր հետաքրքրությունների շրջանակը:
- Կատարել ճեպանկարներ, նախագծել և պատրաստել տիկնիկներ (մարիոնետներ) ներկայացման համար:
- Ստեղծել երևակայության և զգացմունքների վրա հիմնված աշխատանքներ, որոնք արտահայտում են տրամադրություն:
- Բանավոր կամ գրավոր ներկայացնել աշխատանքների հիմնական առանձնահատկությունները, դրանց կապը իրականության հետ (փոխանցում են,

ազդում, նկարագրում, ահազանգում են, կամ կարող են ներազդել, ուղղորդել և այլն):			
Նյութ	**Բառարան**	**Բովանդակություն**	**Գնահատում**
• Թուղթ • Մատիտներ • Խոշորացույց	• Զննողականություն • Կերպար • Ծավալ	Ուշադիր զննել սեղանին դրված պոպկորնները, սովորողներին ուղղորդել ընտրեու դրանցից որևէ մեկը, որի մեջ նկատելի է կերպար (կենդանի, երևակայական բույս, կենցաղային իր և այլն): Խոշորացույցով զննել այն տարբեր կողմերից և ավելի մեծ չափի արտանկարել թղթի հարթությանը: Վերափոխել այն երեք փուլերով. 1. Ընդգծել կերպարային հատկություններ՝ դեմքի կառուցվածք, մարմնի կազմվածք... 2. Ավելացնել որևէ տարր՝ ակնոց, հատուկ գլխարկ, կոշիկ... 3. Գունավորել կերպարը՝ բացահայտելով նրա ինքնատիպությունը: Լրացուցիչ առաջադրանք. հորինել պատմություն, որը կօգնի նկարված կերպարի անհատականությունը բնութագրելու համար:	Կերպարի արտահայտչական ներկայացում: **Ռեսուրս** • Այցելություն ժամանակակից ստեղծագործողների արվեստանոցներ: • Անհատ ստեղծագործողի հետ հանդիպում դասարանում (վարպետաց դաս): • Առցանց թանգարաններ և այլ մեդիա ռեսուրսներ:

Պոպկորնի մեջ կերպարի բացահայտում	Սեփական աշխատանքի քննարկում	Առաջադրանքի օրինակ
Բադիկ **Ծաղիկ** **Գետաձի**	Քննել, վերլուծել և ներկայացնել սեփական աշխատանքը: Կատարել համեմատություններ, վերլուծել տարբերությունները: Բացահայտել և մեկնաբանել աշխատանքների առավելություններն ու բացթողումները: Հիմնավորել նյութի ընտրությունը կոմպոզիցիայի կառուցվածքը:	

 Խեցգետին 		
Միջառարկայական կապ		
Մայրենի - **Ես և շրջակա աշխարհը -** **Երաժշտություն -** **Տեխնոլոգիա -**		